## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

## «ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՅԱՆԵ ԱՇՈՒՂՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 379-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ «ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼՈՒ ՊԱՀԻՑ» ԴՐՈՒՅԹԻ ԵՎ 380-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Քաղաքացի Գայանե Աշուղյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ «հրապարակվելու պահից» դրույթի եւ 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով դիմող կողմի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի եւ Ա. Ղազարյանի միջնորդությունը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հետաձգել սույն գործի դատաքննությունը:

2. Պահանջել ՀՀ դատական դեպարտամենտից սահմանադրական դատարան ներկայացնել ՀՀ դատարանների դատական այն ակտերը, որոնց, դիմումի հետազոտության շրջանակներում, անդրադարձ է կատարվել ՀՀ դատական դեպարտամենտի՝ 21.06.2012թ. թիվ ԴԴ-2 Ե-2789 գրությանը կից դիրքորոշման մեջ:

3. Գործի դատաքննությունն սկսել 2012թ. հոկտեմբերի 16-ին, ժամը 10.00-ին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**
**Ա Ն Դ Ա Մ** **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

10 հուլիսի 2012 թվականի
ՍԴԱՈ -43